ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1566-Ա « 25 » ապրիլի 2025թ.

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի 14.04.2025 թվականի գրությունը և Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի Մետրոպոլիտենի ղեկավար Վ.Ն.Կոզլովսկու հրավերը՝ նվիրված Մոսկվայի մետրոպոլիտենի 90 ամյակին և Մետրո միջազգային ասոցացիայի համաժողովի նիստին մասնակցելու նպատակով.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանին՝ 2025 թվականի մայիսի 13-ից 17-ը ներառյալ գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության բյուջեի միջոցների հաշվին:

3.«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի բացակայության ընթացքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի

մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական գծով տնօրեն Հարություն Դանիելյանին

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ